ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/86

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.06.2018թ. թիվ 03/26-3/10810-18 գրությամբ «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Վանաձորի համայնքապետարանի 08.06.2018թ. թիվ 061/5735 և 13.06.2018թ. թիվ 061/5256 գրությունների հիման վրա, 14.06.2018թ. թիվ 03/26-3/10810-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/86 ընթացակարգի շրջանակներում 19.06.2018թ. ժամը 10:30-ին և 25.06.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Վանաձորի համայնքապետարանը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2018թ. թիվ 061/5735 գրությամբ հայտնել է, որ Վանաձորի համայնքապետարանի կողմից կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-18/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին, 3-րդ և 7-րդ չափաբաժիններում առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով չի ներկայացրել որակավորման չափանիշները, այդ իսկ պատճառով մասնակցի հայտը մերժվել է՝ ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 10.02.2011թ. N168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 04.05.2017թ. N 526-Ն որոշման համաձայն:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/86 ընթացակարգի շրջանակներում 19.06.2018թ. ժամը 10:30-ին և 25.06.2018թ. ժամը 11:05-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/86 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՊՁԲ-18/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին, 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, որին 31.05.2018թ. ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 14.06.2018թ. թիվ 03/26-3/10810-18 գրությունը,

Վանաձորի համայնքապետարանի 08.06.2018թ. թիվ 061/5735 և 13.06.2018թ. թիվ 061/5256 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատաս-

խանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վանաձորի համայնքապետարանի կողմից Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-18/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՊՁԲ-18/62» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում

(չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարության համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-18/62» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին, 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, որին 31.05.2018թ. էլեկտրոնային եղանակով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 14:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով կայացված որոշմամբ «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը չեն ներկայացվել:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում եմ, որ «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ն «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՊՁԲ-18/62» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում խախտել է ստանձնած պարտավորություն, քանի որ Ընկերությունը սահմանված ժամկետում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չի ներկայացրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասով, ինչպես նաև ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 14.06.2018թ. թիվ 03/26-3/10810-18 գրությամբ «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ին

(ՀՎՀՀ՝ 06936171) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վան-Լան Ուսուցման և ինֆորմացիոն կենտրոն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**